



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 91-ԱՍԵԱԿԻՆ ԱՈՒԹՈՎ

**ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ
 ՀԱԲԱՔՆԵՐ՝ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ
 ՀՈԳԵՒՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՄՔԵՐՈՒ**

Հայկական Ցեղասպանության 91-րդ տարեդարձին առիթով, հայկական երեք յարանուանությանց հոգեւոր Առաջնորդները, Հայաստանի Հանրապետության գլխաւոր հիւպատոսը, Լոս Անճելըսի քաղաքապետ Անթոնիօ Վիերակոսա, դաշնակցային ու նահանգային պետական ներկայացուցիչներ, հայկական քաղաքական կազմակերպությանց ու միութեանց ներկայացուցիչներ, Ազգային Վարչութեան անդամներ ու բազմահազար հաւատաւոր հայորդիներ, Եղեռնի ոգեկոչման միացեալ մարմինին կազմակերպութեամբ, 23 եւ 24 Ապրիլին հոգեհանգստեան արարողութիւններով, Ս. Պատարագով ու քաղաքական հաւաքներով խոնարհեցան մեր բիւրաւոր նահատակներուն յիշատակին առջեւ ու շեշտեցին Ցեղասպանության ճանաչման անյետաձգելի հրամայականը:

**Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ ԿԼԵՆՏԵՅԼԻ
 Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՍԷՋ**

Ցեղասպանության 91-ամեակին նուիրուած կրօնական եւ քաղաքական ոգեկոչումներու եւ հանդիսութիւններու համազգային ծիրին մէջ, Երկուշաբթի, 24 Ապրիլ 2006 առաւօտեան ժամը 10-ին, Մոնթեպելլոյի Նահատակաց Յուշարձանին առջեւ տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն, մասնակցութեամբ եւ ներկայութեամբ Հայոց Առաքելական Եկեղեցւոյ Կիլիկեան եւ Էջմիածնական Թեմերու Արեւմտեան Միացեալ Նահանգներու առաջնորդներուն՝ Բարձր. Սուշեղ Սրբ. Արք. Մարտիրոսեանի, Գերշ. Յովնան Արք. Տերտերեանի, ինչպէս նաեւ Հայ Կաթողիկէ ժողովրդապետ Տ. Անտոն Վրդ. Սարոյեանի եւ Հայ Աւետարանական Միութեան Հովիւ Վերապատուելի Յովսէփ Մաթոսեանի, եկեղեցականաց դասերուն, Հայաստանի գլխաւոր հիւպատոս Գագիկ Կիրակոսեանի, հայ քաղաքական կուսակցութեանց ներկայացուցիչներուն, որոնց շարքին՝ Հայ Ցեղափոխական Դաշնակցութեան Բիւրոյի ներկայացուցիչ Վիգէն Յովսէփեանի, Կեդրոնական Կոմիտէի անդամներու, ազգայիններու եւ ուխտապահ հաւատացեալներու:

Աւելի ուշ, ժամը 11-ին Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ Նահատակաց անմեռ յիշատակին մատուցուեցաւ սուրբ եւ անմահ Պատարագ, հանդիսապետութեամբ եւ Նախագահութեամբ Թեմիս Բարեջան Առաջնորդ Բարձր. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ ներկայութեամբ հայ յարանուանութեանց հոգեւոր պետերու եւ հայ եկեղեցականաց դասուն: Պատարագի ընթացքին, յարգանքի խօսք արտասանեցին Յայ Աւետարանական Միութեան Յովի Վերապատուելի Յովսէփ Մաթոսեան եւ Յայ Կաթողիկէ համայնքի ժողովրդապետ Յայր Աստոն Վրդ. Սարեան: Վեր. Մաթոսեան, դատապարտելով ցեղասպան Թուրքին արիւնհարբու արարքը՝ քաղաքակիրթ, աշխատասէր եւ քրիստոնէայ առաջին ժողովուրդ հայ ազգը պապենական իր հողերէն տեղահան եւ արմատախիլ ընելու անմարդային ոճիրը՝ կոչ ուղղեց ամուր կառչելու քրիստոնէական հաւատքին եւ Նահատակաց կտակին, մինչեւ որ իրականանան եւ ձեռք բերուին հայոց արդար իրաւունքները: Իսկ Յայ Կաթողիկէ ժողովրդապետ Յոգշ. Տ. Աստոն Վրդ. Սարոյեան վեր առաւ հայ ժողովուրդի ազգային եւ կրօնական ինքնուրոյն նկարագիրը, վերապրելու անխորտակելի կամքը եւ յանուն արդարութեան եւ արժանապատիւ կեանքի բարի եւ արդար պայքարի ոգին, մինչեւ որ Յեղասպան Թուրքը զոջայ եւ ընդունի մարդու դէմ գործած անմարդկային իր արարքի ահաւորութիւնը եւ իրաւագրկեալ հայ ժողովուրդի արդար իրաւունքները հատուցանէ:

Ապա խօսք առաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազանը, որ շեշտեց, թէ Յայ ժողովուրդը, իբրեւ հաւատացեալ քրիստոնէայ ժողովուրդ, հաստատ կը մնայ իր պահանջատիրութեան վրայ ու Աստուծոյ ապաւինելով՝ իր երթը պիտի շարունակէ մինչեւ վերջնական յաղթանակ (*Առաջնորդ Սրբազանին պատգամին ամբողջութիւնը կու տանք առանձին*):

Յաւարտ Ս. Պատարագի, եկեղեցականաց եւ դպրաց դասու թափօրը եւ պաշտօնական հիւրերը, Թեմիս ժողովականութեան ներկայացուցիչներն ու բազմահարիւր հաւատացեալներ, եկեղեցիէն դուրս գալով, հաւաքուեցան եկեղեցւոյ կից Ապրիլեան Նահատակներու յիշատակին նուիրուած Խաչքարին առջեւ, ուր Նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Յօր՝ կատարուեցաւ Յոգեհանգստեան պաշտօն:

Եկեղեցական արարողութեանց աւարտին, ժողովուրդի մասնակցութեամբ երգուեցան «Կիլիկիա» եւ «Մեր Յայրենիք» երգերը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՔ

ՄՈՆԹԵՊԵԼԼՈՅԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ ՇՈՒՐՁ

Ապրիլ 24ի Նախօրեակին, Շաբաթ օր, Մոնթեպելլոյի Նահատակաց Յուշարձանին առջեւ տեղի ունեցաւ քաղաքական հաւաք մը, մասնակցութեամբ երեք յարանուանութեանց հոգեւոր Առաջնորդներուն, Լոս Անճելըսի քաղաքապետ Անթոնիօ Վիերակոսայի, Նահանգապետ Առնոլտ Շուարցենեկըրի ներկայացուցիչին, Յայաստանի գլխաւոր հիւպատոս Գագիկ Կիրակոսեանի, ինչպէս նաեւ պետական ու միութեանական բազմաթիւ ներկայացուցիչներու:

Քաղաքական հաւաքը կազմակերպուած էր Յեղասպանութեան Ոգեկոչման Միացեալ Մարմինին կողմէ: Յետմիջօրէի ժամը 4:30ին սկսած հաւաքը կը գլխաւորէին Արեւմտեան Թեմի Առաջնորդներ՝ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան, Գերշ. Տ. Յովնան Արք. Տերտերեան, Յայ Աւետարանական

Եկեղեցիներու Միութեան Հովիւ Վեր. Յովսէփ Մաթոսեան, Հայ Կաթողիկէ Համայնքի ժողովրդապետ Հոգ. Տ. Անտոն Վրդ. Սարոյեան. անոնց կողքին էին իւրաքանչիւր համայնքի հոգեւորականաց դասու ներկայացուցիչներ, քաղաքական կուսակցութեանց ներկայացուցիչները, Թեմիս ժողովականութեան անդամներ, հայկական միութեանց ու կազմակերպութեանց ներկայացուցիչներ եւ հազարաւոր ուխտաւոր հայորդիներ: Հանդիսութեան ներկայ ու մասնակից էր նաեւ թուրք մտաւորական մը՝ Ռեճէփ Չարաքօլու, որ իբրեւ Թուրքիոյ մէջ Մարդկային իրաւանց պաշտպանութեան յանձնախումբի մէկ անդամը, հալածանքի ենթարկուած էր իր կառավարութեան կողմէ:

Ձեռնարկին հանդիսավարութիւնը վստահուած էր ծերակուտական ճէքի Սփիրի: Խօսք առնող պետական անձնաւորութեանց շարքին էին քաղաքապետ Վիերակոսա, նահանգապետ Առնոլտ Շուարցընտկըրի ներկայացուցիչը, ծերակուտականներ Էտըմ Շիֆ եւ Ճէք Սքաթ, Լոս Անճելըսի քաղաքապետութեան անդամ Էրիք Կարսեթի եւ ուրիշներ: Անոնք կանգ առին Յեղասպանութեան պատմական իրողութեան վրայ ու հայութեան դատին զօրակցութիւն յայտնելով, անհրաժեշտ նկատեցին, որ արդարութիւն ըլլայ հայութեան:

Խօսք առաւ նաեւ թուրք հիւրը, որ անդրադարձաւ Յեղասպանութեան իրողութեանու անոր նկատմամբ Թուրքիոյ պետութեանու ժողովուրդի վերաբերմունքին:

Քաղաքական հաւաքի աւարտին, հոգեւոր Առաջնորդները, հոգեւորականաց դասը, պետական ու կազմակերպութեանց ներկայացուցիչները բարձրացան Յուշարձան, ուր տեղի ունեցաւ հոգեհանգիստ՝ մեր բիւրաւոր նահատակներուն յիշատակին: Մեր ժողովուրդը Յուշարձանէն մեկնեցաւ մեր պահանջատիրութեան մէջ աննահանջ մնալու կամքով:

ԿԼԵՆՏԵՅԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՁԵՌՆԱՐԿԸ

Մեծ Եղեռնի՝ Ապրիլեան զոհերու յիշատակութեանց ձեռնարկներու ծիրին մէջ, Կլենտէյլի քաղաքապետարանը եւս կազմակերպած էր Ապրիլեան Եղեռնի ոգեկոչման յատուկ ձեռնարկ մը, Կիրակի, Ապրիլ 23-ի կեսօրուան ժամը 2-ին, Կլենտէյլի Ալէքս հանդիսարահին մէջ:

Սոյն ձեռնարկին, Թեմիս բարեխնամ Առաջնորդը ներկայացուց Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան, որուն կ'ընկերանար Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւներէն՝ Արժ. Տ. Կոմիտաս Քիւնյ. Թորոսեան:

Յայտագրին բացման խօսքը կատարեց քաղաքապետարանի անդամ Րաֆֆի Մանուկեան, ապա խօսք առին քաղաքապետական խորհուրդի անդամներէն Արա Նաճարեան, քաղաքապետ Տէյվիտ Ուիվըր, եւ քոնկրետական Էտըմ Շիֆ, որոնք շեշտեցին Հայոց դատը ամբողջ աշխարհին կողմէ արդարօրէն ընդունուելու հրամայականը:

Այս առիթով ցուցադրուեցաւ նաեւ Տոքթ. Մայքըլ Յակոբեանի պատրաստած վաւերագրական ժապաւէնը, հայոց ջարդին վերաբերեալ, ուր հեղինակը լուսարձակի տակ կը բերէ Գերմանիոյ պետութեան լուռ մեղսակցութիւնը՝ հայոց զանգուածային բնաջնջման եւ արքորման հարցով:

Յայտագրի աւարտին, Եղեռնի նուիրուած ու այդ թեմայի պարերով ելոյթ ունեցան Վարդան Եւ Սիրանոյշ Գեորգեան Միջազգային պարերու դպրոցի պատանեկան ու երիտասարդական խումբը, որ Մեծ Եղեռնը պատկերեց յուզական բայց յաղթական պարերով:

On the 91st Anniversary of the Genocide

H. E. THE PRELATE PRESIDES OVER CEREMONIES AND PARTICIPATES IN MEETINGS

On the 91st anniversary of the Armenian Genocide, the Clergy of the three denominations of the Armenian Church, along with the Consul General of the Republic of Armenia, Los Angeles Mayor Antonio Villaraigosa, representatives of Armenian political, benevolent and cultural organizations, public officials, Prelacy Executive Council members, and thousands of people commemorated the Genocide with requiem services, Holy Mass, and public gatherings.

Holy Mass in Glendale's St. Mary's Church

In the morning of Monday, April 24, 2006, a special requiem service took place at Montebello's Genocide Monument with the participation of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Hovnan Derderian, Primate, Very Rev. Fr. Andon Saroian of the Armenian Catholic Church, Rev. Joe Matossian of the Armenian Evangelical Church, and members of clergy. Among the attendees were Honorable Gagik Giragossian, Consul General of the Republic of Armenia, A.R.F. Bureau representative Dr. Viken Hovsepian, and representatives of the Armenian political organizations.

Following requiem, Holy Mass took place at Glendale's St. Mary's Church under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, with the participation of clergy from the three Armenian denominations. During the Mass, remarks were made by Rev. Joe Matossian and Very Rev. Fr. Andon Saroian.

Remarks were then made by Archbishop Mardirossian, who stressed that the Armenian people, as faithful Christians, remain firm in their demands and with God's Will continue on their path towards victory.

At the conclusion of Holy Mass, guests and parishioners joined the procession of clergy and choir members to the khachkar dedicated to the memories of our martyrs, where requiem service was conducted.

The service ended with the singing of "Giligia" and National Anthem of Armenia; "Mer Hayrenik".

Public Gathering at Montebello's Genocide Monument

In the afternoon of Saturday, April 23, 2006, a political meeting took place at the Genocide Monument in Montebello with the participation of the three Armenian denominations, Mayor Antonio Villaraigosa, a representative of California Governor Arnold Schwarzenegger, Armenia's Consul General Gagik Giragossian, and representatives of various Armenian organizations.

The gathering, organized by the Genocide Recognition Joint Committee, began at 4:30 p.m. under the auspices of Archbishop Moushegh Mardirossian, Archbishop Hovnan Derderian, Very Rev. Fr. Andon Saroian, and Rev. Joe Matossian. Also participating in the gathering was Recep Zarakolu, member of a human rights group in Turkey. The keynote speaker of the day was Professor Peter Cowe, Narekatsi Professor of Armenian Studies at UCLA.

The emcee of the event was Senator Jackie Speier. Remarks were made by Mayor Villaraigosa, Governor Schwarzenegger's representative, Congressmen Adam Schiff and Jack Scott, City Council member Eric Garcetti, and others. Mr. Recep Zarakolu also made remarks.

Following the official program, requiem services took place.

Glendale City Council Commemorates Genocide

On Sunday, April 23, at 2:00 p.m. Glendale City Council commemorated the Genocide at Alex Theatre in Glendale. Representing the Prelate was Very Rev. Fr. Barthev Gulumian, who was joined by Rev. Gomidas Torossian of Glendale's St. Mary's Church.

Opening remarks were made by Glendale City Council member Rafi Manoukian, followed with remarks by Mayor Dave Weaver, Council member Ara Najarian, and Congressman Adam Schiff.

During the event, Michael Hagopian's documentary on the Armenian Genocide was shown. At the conclusion of the program, students of the Vartan and Siranoush Kevorkian Dance School performed dances fitting the solemn occasion.